

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՃԱԾ ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեպտեմբերի 16-ին, մեկօրյա պաշտոնական այցով, Թբիլիսիում էր գտնվում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում էին Ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանը, Հայաստանի տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը, Վրաստանում Հայաստանի դեսպան Աշոտ Սմբատյանը, Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Խաչատրյանը, վարչապետի աշխատակազմի Արտաքին կապերի վարչության պետ Կարեն Գասպարյանը, Հայաստանի վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանը:

Թբիլիսիի «Շոթա Ռուսթավելի» միջազգային օդանավակայանում, Հայաստանի վարչապետին եւ պատվիրակության անդամներին դիմավորեց Վրաստանի Տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարար Իրակլի Քարսելաձեն:

Վրաստանի կառավարության գրասենյակում կայացավ Հայաստանի վարչապետի դիմավորման պաշտոնական արարողությունը, որին հաջորդեց Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեի եւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի առանձնազրույցը, իսկ այնուհետեւ ընդլայնված կազմով պատվիրակությունների հանդիպումը:

### ԸՆԴՊՃՎԵՑ ԵՐԿՎՈՐՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԱՅՆՄԱՆ ՈՒ ԱՄՐԱՊՆՂՄԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ

Վրաստանի եւ Հայաստանի վարչապետերի հանդիպմանը՝ Իրակլի Կոբախիձեի ողջունեց Հայաստանի վարչապետի պաշտոնական այցը եւ ընդգծեց երկու երկրների միջեւ ռազմավարական հարաբերությունների հետեւողական զարգացման կարեւորությունը բոլոր ոլորտներում: Վրաստանի վարչապետը շեշտեց Հայաստանի հետ առեւտրատնտեսական փոխգործակցության, բիզնես կապերի ընդլայնման եւ ենթակառուցվածքների զարգացման կարեւորությունը:

Իր հերթին Նիկոլ Փաշինյանը շնորհակալություն հայտարարեց:

Նեց ջերմ հյուրընկալության համար նշելով, որ փոխադարձ բարձր մակարդակի այցերի ինտենսիվ բնույթը վկայում է երկու երկրների կառավարությունների շահագրգռվածությունը ընդլայնելու եւ ամրապնդելու բազմակողմ համագործակցությունը: Նիկոլ Փաշինյանը նշեց, որ Հայաստանի կառավարությունը շահագրգիռ է բարեկամ Վրաստանի հետ ռազմավարական համագործակցությանը եւ կարեւորեց տնտեսության, էներգետիկայի, զբոսաշրջության, կրթության, մշակույթի եւ այլ ոլորտներում համատեղ ծրագրերի իրականացումը:



Կողմերը պատրաստակամություն հայտնեցին շարունակել քննարկումները ենթակառուցվածքների զարգացման (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

### ՕՐԵՆՄԻՐ

## ԸՆԴՈՒՆՎԵՅԻՆ «ՀԱՄԱՆԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԱՐՄՎԱԶԱՐՈՒՅՑ ՕՐԵՆՔՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆԻ 10-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆ ԸՆԿՎԱՑՐԵՑ ԿԵՐՁԻՆ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍԱԸ

Սեպտեմբերի 17-ին Վրաստանի 10-րդ գումարման խորհրդարանն անցկացրեց լիազումար եզրափակիչ նիստ: Օրակարգում հանրության շրջանում լայն արձագանք գտած «Համաներման մասին» եւ «Ընտանեկան արժեքների եւ անչափահասների պաշտպանության մասին» օրինականագծերի երրորդ, վերջնական քննարկումն էր: Ընդդիմության մի մասը չենք կայացրեց խորհրդարանի լիազումար նիստին: Ինչպես արդեն հաղորդել ենք, վերջիններս «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրենքի ընդունումից հետո բոլորտել են նիստերը:

### ՀԱՄԱՆԵՐՈՒՄ ՇՈՒՐՁ ՎԵՑ ՀԱԶԱՐ ԲԱՆՏԱՐԿՅԱԼԻ

Վրաստանի 10-րդ գումարման խորհրդարանի վերջին լիազումար նիստում՝ 84 ձայնով ընդունվեց նաեւ «Վրացական երազանքի» նախաձեռնած «Համաներման մասին» օրենքի նախագիծը:

Համաներման արդյունքում՝ մոտ 1000 բան-

տարկյալ անհապաղ ազատ կարծակվի, մոտ 4800 բանտարկյալի պատժաչափը կկրճատվի տարբեր ժամկետներով (կիսով չափ, մեկ քառորդով, մեկ վեցերորդով): Շուրջ 7000 պայմանական ազատազրկվածների ժամկետը կկրճատվի առնվազն մեկ տարով:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

### «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ՔԱՐՈՉԱՐՇԱԿԸ

## ԲԻԶՆԵՍ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ԱՆՊԱՅՄԱՆ ԿԱՆՅՎԱՑՎԻ ՎՐԱՅՈՒՄՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՉԸ ԿԴԱՌՆԱ ՄԵՐ ՀԱՇՏԵՅՄԱՆ ՆԱՍԱԳՐՅԱԼԸ»



Հոկտեմբերի 26-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրությունների նախընտրական քարոզարշավի շրջանակներում՝ «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցությունը սեպտեմբերի 14-ին Գորիում անցկացրած բազմահազարանոց հանրահավաքին ներկայացրեց իր նախընտրական ծրագիրը:

Հանրահավաքին ելույթ ունեցավ «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության պատվավոր նախագահ Բիծինա Իվանիշվիլին:

Նշեմք, որ մինչ այդ կայացած հանրահավաքներին, կուսակ-

ցության ղեկավարությունը, նշելով առաջիկա ընտրություններին սահմանադրական մեծամասնության ստացման անհրաժեշտությունը, թվարկում էր պատճառներ, որոնց կարգավորման համար նույնպես անհրաժեշտ էր իրականացնել (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

### ՀԱՅԱՍՏԱՆ

## ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ը ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՍՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

Սեպտեմբերի 21-ին նորանկախ Հայաստանը եւ համայն հայությունը նշում են Անկախության հռչակման 33-րդ տարեդարձը:



Հայաստանի Անկախության մասին հռչակագիրն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանում՝ 1990թ. օգոստոսի 23-ին: Հռչակագրով լուծարվեց Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը՝ հռչակվելով որպես անկախ Հայաստանի Հանրապետություն: Հայաստանի Գերագույն խորհրդի որոշմամբ՝ 1991թ. սեպտեմբերի 21-ին հանրաքվե անց-

կացվեց ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին: Չայնի իրավունք ունեցող քաղաքացիների 94,99 տոկոսը «կողմ» քվեարկեց անկախությանը:

Սեպտեմբերի 23-ին Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ:

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅՎԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ



Սեպտեմբերի 17-20-ը Հայաստանի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի նախաձեռնությամբ Երեւանում անցկացվեց Համաշխարհային հայկական երկրորդ գագաթնաժողովը: Միասնական հարթակում տարբեր ձեռնաչափերով քննարկվեցին Հայաստանի եւ սփյուռքի արդի մարտահրավերներն ու խնդիրները, կայուն զարգացման հնարավորությունները:

Գագաթնաժողովին ներկա էր 1000 մասնակից 60 երկրից՝ նպատակ ունենալով ապահովել սփյուռքի ներգրավվածությունը Հայաստանի օրակարգային հարցերում, ինչպես նա-

եւ հաղիսանալ կամուրջ՝ ռազմավարական քննարկումների, համերաշխության, փոխըմբռնման եւ լուծումների կայացման գործընթացում:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)



ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՃԱԾ ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րուն ունենալ՝ ապահովելու կայունությունը տարածաշրջանում, բնականաբար, մեր ուժերի ներածին չափով:

Եվ վերջում, կրկին ցանկանում եմ գոհունակություն հայտնել մեր այսօրվա հանդիպումների համար: Մենք շատ հետաքրքիր զրույցներ ենք ունեցել, հնարավորություն ունեցանք տեսակետներ փոխանակել Վրաստանի եւ Հայաստանի միջև հարաբերությունների, այն գործընթացների մասին, որոնք ընթանում են տարածաշրջանում:

Շատ շնորհակալ եմ, պարոն վարչապետ, Վրաստան այցելելու համար եւ շնորհակալություն Վրաստան-Հայաստան հարաբերությունների զարգացման մեջ Ձեր ներդրման համար:

կի առաջընթաց: Հայաստանն ու Ադրբեջանը պայմանավորվածություն են ձեռք բերել սահմանազատման հետագա գործընթացում առաջնորդվել 1991թ. Ալմա-Աթա-յի հռչակագրի դրույթներով, ինչը նշանակում է, որ այդ գործընթացի հիմքում պետք է ընկած լինեն խորհրդային Միության խորհրդային հանրապետությունների ադմինիստրատիվ սահմանները: Ակնկալում եմ, որ ամենամոտ ապագայում գործնական առաջընթաց կապահովենք նաեւ Հայաստան-Վրաստան սահմանազատման գործընթացի շրջանակներում, ինչի վերաբերյալ արդեն քննարկել ենք եւ ունենք ընդհանուր ըմբռնում, որը, կարծում եմ, շատ կարելի է:

Կարծում եմ, տեղյակ եք, որ, շուրջ երկու տարվա բանակցությունների արդյունքում, Հայաստանն ու Ադրբեջանը կարողացել են առավելապես համաձայնեցնել «Խաղաղության եւ միջպետական հարաբերությունների հաստատման մասին» պայմանագրի տեքստը՝ մոտավորապես 80 տոկոսը: Մենք Ադրբեջանին առաջարկել ենք ամենամոտ ապագայում ստորագրել այդ փաստաթղթի նախագծում առկա, եւ մինչ այս պահին արդեն իսկ համաձայնեցված դրույթները, հաստատել դիվանագիտական հարաբերություններ ու շարունակել քննարկումները՝ երկուստեք կարելիություն ներկայացնող բոլոր հարցերը հասցեագրելու ուղղությամբ:

Տարածաշրջանի կայունության եւ տնտեսական զարգացման համար առաջնային կարեւորություն ունի տնտեսական բոլոր ենթակառուցվածքների եւ կապուղիների ապաշրջափակումն ու լիարժեք գործարկումը, որը համարում ենք մեր կառավարության առաջնահերթություններից մեկը: Այս հարցում մեր պատկերացումները լավագույնս արտացոլված են Հայաստանի կառավարության մշակած «Խաղաղության խաչմերուկ» նախագծում, որը, ի դեպ, առաջին անգամ միջազգային մեր գործընկերների դատին եմ հանձնել հենց թիֆլիսիում տեղի ունեցած համաժողովի ընթացքում:

Հարգելի պարոն վարչապետ, ես իրապես հավատում եմ, որ մենք ունենք Հարավային Կովկասում հակամարտության էջը փակելու եւ մեր տարածաշրջանում հարատեւ խաղաղություն հաստատելու պատմական հնարավորություն: Հանդիպած եմ, որ այդ խաղաղության շահառուն ոչ միայն Հայաստանն ու Ադրբեջանն են, այլեւ դրանից հավասարապես օգտվելու են Վրաստանը, Թուրքիան, Իրանը: Ահա այս է պատճառը, որ, չնայած բոլոր բարդությունների, մեր կառավարությունը հետեւողականորեն շարունակում է ջանքեր գործադրել՝ տարածաշրջանում խաղաղությունը հնարավոր դարձնելու ուղղությամբ, եւ մենք բարձր ենք գնահատում նաեւ Վրաստանի կառավարության ջանքերը՝ իր ներդրումն ունենալ եւ իր վարած քաղաքականությամբ նույնպես նպաստել տարածաշրջանում եւ միջազգային հարթակում կայունության եւ խաղաղության հաստատմանը:

Հարգելի պարոն վարչապետ,

Ես իրապես հավատում եմ, որ մենք ունենք Հարավային Կովկասում հակամարտության էջը փակելու եւ մեր տարածաշրջանում հարատեւ խաղաղություն հաստատելու պատմական հնարավորություն: Հանդիպած եմ, որ այդ խաղաղության շահառուն ոչ միայն Հայաստանն ու Ադրբեջանն են, այլեւ դրանից հավասարապես օգտվելու են Վրաստանը, Թուրքիան, Իրանը: Ահա այս է պատճառը, որ, չնայած բոլոր բարդությունների, մեր կառավարությունը հետեւողականորեն շարունակում է ջանքեր գործադրել՝ տարածաշրջանում խաղաղությունը հնարավոր դարձնելու ուղղությամբ, եւ մենք բարձր ենք գնահատում նաեւ Վրաստանի կառավարության ջանքերը՝ իր ներդրումն ունենալ եւ իր վարած քաղաքականությամբ նույնպես նպաստել տարածաշրջանում եւ միջազգային հարթակում կայունության եւ խաղաղության հաստատմանը:



ման համատեղ ծրագրերի ուղղությամբ, ինչը կնպաստի նաեւ տարածաշրջանային համագործակցության ընդլայնմանը:

Նիկոլ Փաշինյանը Վրաստանի գործընկերոջը մանրամասներ փոխանցեց Հայաստանի եւ Ադրբեջանի միջև խաղաղության պայմանագրի շուրջ քննարկումների, ինչպես նաեւ սահմանազատման գործընթացի վերաբերյալ:

Իրակլի Կոբախիձեն ողջունեց Հայաստանի եւ Ադրբեջանի խաղաղությանը միտված քայլերը՝ ի նպաստ տարածաշրջանում խաղաղության եւ կայունության հաստատման ու ամրապնդման: Վրաստանի վարչապետը մեկ անգամ եւս հայտնեց իր երկրի պատրաստակամությունը՝ նպաստելու երկու հարեւան պետությունների միջև հարաբերությունների կարգավորմանը:

Քննարկումների արդյունքների մասին Վրաստանի եւ Հայաստանի վարչապետերը հանդես եկան հայտարարություններով:

## ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱՒԻԶԵ. «ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՂԱՐՁ ՀԱՐԳԱՆՔԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Հարգելի պարոն վարչապետ, կրկին ողջունում եմ Ձեզ, ողջունում եմ Հայաստանի եւ Վրաստանի կառավարությունների ներկայացուցիչներին: Շատ հաճելի է Ձեզ հյուրընկալել, հարգելի պարոն վարչապետ:

Հիշեցնեմ մարտին Հայաստանի Հանրապետություն կատարած այցիս առիթով, երախտագիտությունս եմ հայտնում Ձեր ընդունելության եւ հյուրընկալության համար: Վրաստանի եւ Հայաստանի միջև մեր հարաբերությունները հիմնված են բազմամյա բարեկամական կապերի վրա, որոնք գոյություն ունեն մեր ժողովուրդների միջև՝ հարյուրամյակների փոխադարձ հարգանքի հիման վրա: Եվ շատ ուրախ եմ, որ այս ամենի արդյունքում ռազմավարական գործընկերություն է հաստատվել քաղաքական տեսանկյունից, որը կաջակցի մեր հարաբերությունների հետագա խորացմանը: Շատ ուրախ եմ, որ ռազմավարական գործընկերության մասին համաձայնագրի ստորագրումը կարելի դերակատարում է ունեցել եւ գործնական արդյունքների բերել:

Երախտագիտությունս հայտնեցի իմ գործընկերոջը՝ վարչապետին, իր այն որոշման համար, որով աջակցություն ցուցաբերվեց ՄԱԿ-ի բանաձեւին՝ կապված ներքին տեղահանված անձանց եւ փախստականների՝ Աբխազիայի եւ Ցխինվալիի շրջաններ վերադարձի հետ: Այդ որոշումը կնպաստի մեր երկու երկրների միջև հարաբերությունների հետագա ամրապնդմանը:

Երախտագիտությունս եմ հայտնում նաեւ իմ գործընկերոջը՝ մեր երկրների ինքնիշխանությանը եւ տարածքային ամբողջականությանը աջակցելու համար: Մեր հարաբերությունները շատ դինամիկ են, բարձրաստիճան այցերը հաճախակի են, եւ մենք պարտավոր ենք այս շարժը մեր հարաբերություններում պահպանել: Մենք գրուցեցինք բոլոր ուղղություններով մեր հարաբերությունների խորացման մասին քաղաքական, տնտեսական, կրթական եւ այլ բնագավառներում: Այս ոլորտները մեզ համար հավասարապես առաջնահերթ են:

Վրաստանն աջակցում է Հարավային Կովկասում խաղաղությանը եւ կայունությանը: Կրկնվում է, որ մեր ջանքերը, մասնավորապես տարածաշրջանում առկա դժվարությունների հաղթահարման ուղղությամբ, շարունակվում են: Վրաստանը ողջունում է Ադրբեջանի եւ Հայաստանի միջև հակամարտության լուծման ուղղությամբ դրական ընթացքը, եւ պատրաստ ենք մեր դերակատար

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԳՈՐԾՈՆ»

Մեծարգո վարչապետ Կոբախիձե, Հայաստանի եւ Վրաստանի կառավարությունների հարգելի անդամներ, հարգելի ներկաներ,

Ուրախ եմ, եղբայրական Վրաստան հերթական այցի առիթով: Թույլ տվեք շնորհակալություն հայտնել ինձ եւ իմ գլխավորած պատվիրակությանը ցուցաբերած ավանդական ջերմ ընդունելության եւ հյուրընկալ



ության համար:

Վերջին տարիներին Հայաստանի եւ Վրաստանի հարաբերություններում նկատելի է լուրջ ակտիվություն, որի շնորհիվ մեզ հաջողվել է նաեւ ընդլայնել բոլոր բնագավառներում մեր երկրների միջև ծավալված բազմաբովանդակ փոխգործակցությունը: Ասվածի լավագույն ապացույցն այն է, որ այս տարվա հունվարին Հայաստանի եւ Վրաստանի համագործակցությունը հասցվեց ռազմավարական գործընկերության մակարդակի: Այդպիսով, մեզ հաջողվել է մշակել արդյունավետ եւ պարբերական շփումների կենսունակ մի մեխանիզմ, որը հիմնված է փոխադարձ շահերի, մեր երկրների բարեկամ ժողովուրդների որդեգրած սկզբունքների ու ժողովրդավարական արժեքների վրա:

Առանձնահատուկ պետք է ընդգծեմ, որ Հայաստանն ու Վրաստանը փոխադարձաբար աներկբայորեն հարգում են միմյանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը: Այս փաստը համարում եմ Հարավային Կովկասում կայունության եւ երկարատեւ խաղաղության հաստատման կարելի գործոններից մեկը: Մեր երկրների միջև առկա համագործակցությունը մեր պատկերացումների գործնական արտացոլումն է, թե ինչպիսին պետք է լինեն տարածաշրջանի երկրների միջև փոխադարձ հարգանքի, ընդհանուր շահերի եւ համընդհանուր զարգացմանը միտված տնտեսական համագործակցության վրա հիմնված հարաբերությունները:

Հարգելի գործընկերներ,

Այսօր առիթ ունենք անդրադառնալ մեր տարածաշրջանում երկարատեւ խաղաղության հաստատմանը եւ կայունության ամրապնդմանն առնչվող հարցերի լայն շրջանակի: Գործընկերոջս ներկայացրել եմ Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացի վերջին զարգացումները: Պետք է նշել, որ Ադրբեջանի հետ սահմանազատման եւ սահմանագծման գործընթացի շրջանակում տեղի ունեցած բանակցությունների ընթացքում, մեզ հաջողվել է արձանագրել որոշա-

## ՎԵՐԱՂԱՐՁ ԵՐԵՎԱՆ



Սեպտեմբերի 16-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն, Թբիլիսիի «Շոթա Ռուսթավելի» միջազգային օդանավակայանում, Երեւան ճանապարհեց պաշտոնական մեկօրյա այցով Թբիլիսիում գտնվող Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանին:

Ըստ Վրաստանի կառավարության եւ Հայաստանի կառավարության մամուլ ծառայությունների



Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՕՐԵՆՍԴԻՐ

ԸՆԴՈՒՆՎԵՅԻՆ «ՀԱՄԱՆԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԵՎ ԱՆՉԱՓԱՆՆԵՐԻ ՊԱՏՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԱՐՄԱՆՔԱՐԿՈՒՄՈՒՅՑ ՕՐԵՆՔՆԵՐԸ

(Ակիզբը՝ 1-ին էջում) Համայնքումը նախատեսվում է Քրեական օրենսգրքի 290-ից ավելի հոդվածներով պատ-

Օրենքը տարածվում է նաև հանցագործությունը կոծկելու եւ չհայտնելու համար նախատեսված պատիժների վրա: Համայնքումը չի տարածվի սպանության, թմրավաճառության, սեռական հանցագործությունների, կողոպուտի, ահաբեկչության, կոռուպցիայի եւ պաշտոնեական հանցագործությունների, կազմակերպված հանցագործության, սովորական հանցագործությունների եւ այլ ծանր ու առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց վրա:

Համայնքումը ուժի մեջ է մտնում հրապարակումից անմիջապես հետո:

ՕՐԻՆԱԿԱՆՈՐԵՆ ՎԱԿԵՐԱՑՎԵՑԻՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Երկրի օրենսդիր գերագույն մարմինը վերջին՝ երրորդ ընթերցմամբ, 84 ձայնով ընդունեց կառավարող «Վրացական երազանքի» նախաձեռնած «Ընտանեկան արժեքների եւ անչափահասների պաշտպանության մասին» ԼԳԲՏ-ի անձանց իրավունքները սահմանափակող օրինականագծերի փաթեթը, որով նախատեսվում է փոփոխությունների իրականացում գործող 18 օրենքներում:

Ընդունված օրինականագծով սահմանվում են անչափահասների ամուսնության, որդեգրման եւ խնամակալության, բժշկական մանկապուլյացիաների կիրառումը՝ անձին կենսաբանական սեռից տարբեր սեռի դասելու, պետության կողմից տրված փաստաթղթում սեռը նշելու, կրթության, տեղեկատվության տարածման հետ կապված հարցեր, հասարակական հավաքներ եւ ցույցեր, կենսաբանական սեռի անտեսում՝ աշխատանքային հարաբերությունների շրջանակներում: Օրենսդրական փաթեթը սահմանում է կիրարկման մեխանիզմները եւ օրենքի կիրարկման համար անհրաժեշտ մեխանիզմները: Բացի այդ, մայիսի 17-ը օրենսդրական մակարդակով սահմանվել է՝ որպես «Ընտանիքի օրը» եւ ծնողների հարգանքի օրը:

Օրինականագծի համաձայն ամուսնությունը կենսաբանական տարբեր սեռի երկու անձանց կամավոր միությունն է՝ ընտանիք ստեղծելու նպատակով, որը համապատասխանում է Վրաստանի օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Միության այլ տեսակների գրանցումը՝ որպես ամուսնություն եւ (կամ) իրավական ակտով ամուսնություն ճանաչելը չի թույլատրվում:

Օրինականագիծն առաջին ընթերցմամբ ընդունվել էր հունիսի 27-ին, երկրորդ ընթերցմամբ՝ սեպտեմբերի 4-ին:

ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆ

ԱՄԱԼՔԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱԿԻ ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՐՉԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՆՆԵՐԻՆ

Ախալքալաքիի մունիցիպալիտետում ինտենսիվ շարունակվում են մարզական ենթակառուցների կազմակերպման աշխատանքները:

Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խթանման առաջնահերթության շրջանակներում, Ախալքալաքիի մունիցիպալիտետի քաղաքապետ Մելքոն Մակարյանը, փոխքաղաքապետ Թեյմուրազ Մճեղիձեն ծանոթացան Ախալքալաքիի մարզադպրոցում ընթացող վերականգնողական աշխատանքներին, որը ֆինանսավորվում է տեղական բյուջեից եւ դրա արժեքը կազմում է 70881 լարի:

Մարզական ենթակառուցի մարզադաշտի վերանորոգում է իրականացվում մունիցիպալիտետի Բեժանո գյուղում: Տեղական բյուջեից այդ ծրագրի իրականացման համար հատկացվել է 94727 լարի:

ՆԻՆՈՇՄԻՆԿԱ ԱԿՏԻՎՈՐԵՆ ԻՐԱՎԱՆՁՎՈՒՄ ԵՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ

Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետարանը ակտիվորեն սկսել է ենթակառուցային նախագծերի իրականացումը:



Մասնավորապես, վերանորոգվում է Փոքր Խանչալի գյուղի ծխակաթարության տունը եւ կկառուցվի օժանդակ շինություն, որտեղ կտեղակայվեն խոհանոցն ու սանհանգույցները: Նախագծի

արժեքը կազմում է 50 000 լարի: Ինչպես նշեց մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանը, քաղաքապետարանում, տարբեր ենթակառուցների բարեկարգման նպատակով, ակտիվ ընթանում են շինարարա-վերանորոգման աշխատանքներ:

ԱՄԱՆՎԻՏԵՆ ԵՎԵՐԵՆ՝ ՄԱՆԿԱԴԱՐՏԵՂՆԵՐԻՆ

Նախադպրոցական դաստիարակության հաստատությունների սամերին, դաստիարակների, նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ, իրենց շնորհավորանքը հղեցին Ախալքալաքիի մունիցիպալիտետի փոխքաղաքապետ Ռուբեն Կարապետյանը, քաղաքապետարանի մշակույթի ծառայության ղեկավար Քեթևան Միշվելաձեն եւ մունիցիպալիտետի նախադպրոցական դաստիարակության հաստատությունների ղեկավար Մա-



րինա Մերաբիշվիլին: Նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ՝ մանկապարտեզներին որպես նվեր հանձնվեցին էլեկտրատեխնիկական իրեր, սպասք, խաղալիքներ, մեթոդական նյութեր եւ ձեռնարկներ:

Ներկա դրությամբ, Ախալքալաքիի մունիցիպալիտետի տարածքով գործում է 24 մանկապարտեզ, որտեղ հաշվառված է շուրջ 1800 սան:

Ներկա դրությամբ, վերանորոգման աշխատանքներ են իրականացվում մունիցիպալիտետի Մուսխի, Ագարա գյուղերում, Ախալքալաքի քաղաքում: Շինարարական եւ վերանորոգման աշխատանքները ֆինանսավորվում են մունիցիպալային զարգացման հիմնադրամի եւ տեղական բյուջեի հաշվին:

Պատրաստեց ԱՐԵՎԻԿ ԱՍՆՈՒԿՅԱՆԸ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ

ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՅՑ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԱՆՁԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ



Պահպանության ոստիկանությունը Վրաստանի ներքին գործերի նախարարության հանրային իրավունքի իրավաբանական անձ է, որը գործում է 2004 թվականից:

Պահպանության ոստիկանության առաքելությունն է ապահովել երկրի քաղաքացիների անվտանգությունը եւ նրանց գործունեության համար ստեղծել առողջ միջավայր: Պահպանության ոստիկանության հիմնական գործունեությունն իրենից ներկայացնում է իրավաբանական/ֆիզիկական անձանց գույքի եւ անձի անվտանգության պահպանություն, նաեւ՝ երկրի ռազմավարական նշանակության օբյեկտների պահպանություն:

Վրաստանի ողջ տարածքում պահպանության ոստիկանության կողմից (ինչպես տեխնիկական միջոցներով, այնպես էլ՝ ոստիկանության ուժերով) պաշտպանված է ավելի քան 15 հազար օբյեկտ, այդ թվում՝ նշանակալի ռազմավարական օբյեկտներ՝ միջազգային օդանավակայաններ, ազգային գանձարաններ, երկրում հավատարմագրված դիվանագիտական առաքելություններ, երկաթուղային մայրուղիներ:

Պահպանության ոստիկանությունը քաղաքացիներին առաջարկում է հետեւյալ սպասարկումները. \* ոստիկանական պահպանություն \* պահպանություն տեխնիկական

միջոցներով \* պահպանություն-ուղեկցում պահակախմբով \* ավտոմեքենայի GPS վերահսկողություն \* անձնական պահպանություն

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑ ԴԱՐՉԱՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՍՈՅԱՎԱԾ ԱՇԽԱՏԱԿԻՑ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության միջազգային հարաբերությունների ղեկավարման գլխավոր մասնագետ Վիկտորյա Կուլարեիշվիլին դարձավ 2024-2025 թվականների համաշխարհային մաքսային կազմակերպության (WCO) պաշտոնական զարգացման ծրագրի ասոցացված աշխատակից:

Նա ընտրվել է տարբեր երկրների լավագույն դիմորդների շարքից: Պաշտոնական զարգացման ծրագրի շրջանակներում՝ համաշխարհային մաքսային կազմակերպությունն իր անդամ վարչակազմերից ամեն տարի ընտրում է ասոցացված մեկ աշխատակից: Վերոնշյալ ծրագիրը գործում է 2009 թվա-

կանից եւ առաջին անգամ Վրաստանի մաքսային վարչակազմի աշխատակիցն արժանացավ համաշխարհային մաքսային կազմակերպության ասոցացված աշխատակցի պաշտոնին:



ԲԱՑԱՐԱՅՏՎԵԼ Է ԽՈՇՈՐ ԶԱՓԵՐԻ ԶՐԱՅՏԱԳՐՎԱԾ ՈՍԿԵՂԵՆ

Սեպտեմբերի 13-ին Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, Սարկիի սահմանային անցակետում, կասկածի հիման վրա, խուզարկել են մունիցիպալ Վրաստանի քաղաքացու ուղեբեռը: Խուզարկության արդյունքում հայտնաբերվել է, ընդհանուր առմամբ, 733 գրամ չհայտագրված ոսկյա զարդեր: Չհայտագրված ապրանքի մաքսային արժեքը կազմում է 93598,05 լարի: Գործի նյութերը, հետագա արձագանքման համար, առաքվել են Վրաստանի ֆինանսների նախարարության քննչական ծառայությանը:

Սեպտեմբերի 17-ին, Սարկիի սահմանային անցակետում, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, կասկածի հիման վրա, խուզարկել են օտարերկրյա քաղաքացու ուղեբեռը: Խուզարկության արդյունքում հայտնաբերվել է 449,14 գրամ ոսկյա դրամներ եւ 141,85 գրամ ոսկյա զարդեր: Չհայտագրված ապրանքի մաքսային արժեքը կազմում է 116 599,26 լարի: Գործի նյութերը, հետագա արձագանքման համար, առաքվել են Վրաստանի ֆինանսների նախարարության քննչական ծառայությանը: **Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայություն**



«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱՋԱՆՔԻ» ՔԱՐՈՋԱՐՇԱՎՈՐ

ԲԻԶՆԵՍԱԿԱՆ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ԱՆՊԱՅՄԱՆ ԿԱՆՅԿԱՅՎԻ ՎՐԱՑԱԿԱՆ ՆՅՈՒՐԵՆԲԵՐԳԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՉՈՒ ԿԳԱՌՆԱ ՄԵՐ ՀԱՇՎԵՑՄԱՆ ՆԱԽԱԳՐՅԱԼԸ»

(Սկզբը՝ 1-ին էջում)

րաժեշտ էր այդ մեծամասնությունը: Թվարկած պատճառներից երեքը բարձրաձայնվում էր, սակայն չորրորդ հիմնավորումը, ըստ կուսակցության ղեկավարների, դեռևս մշակման փուլում է, թեպետ Գորիում, Շիրակ և Բարթեղի տարածաշրջանում անցկացված հանրահավաքին, Բիժինա Իվանիշվիլին բարձրաձայնեց նաև չորրորդ պայմանը:

Իր խոսքում, «Վրացական երազանք» կուսակցության պատվավոր նախագահը ներկաներին հիշեցրեց 12 տարի առաջ 2012 թվականի խորհրդարանական ընտրություններին հնչեցրած իր խոստումները:

- Ես խոստացա, որ պետությունը կփոխի իր վերաբերմունքը մարդու նկատմամբ, եւ այդ խոստումը կատարեցինք, ներդրեցինք առողջապահության համընդհանուր ծրագիր, մի քանի անգամ բարձրացրինք կենսաթոշակներն ու սոցիալական նպաստները, հարյուր հազարավոր մարդիկ հաղթահարեցին աղքատությունը:

2012 թվականին մենք հայտարարեցինք, որ հզոր գյուղը հզոր պետության հիմքն է ու խոստացանք, որ վրացական գյուղի վերածննդի համար կհիմնենք միլիարդանոց հիմնադրամ: Այս խոստումը մոյսնալիս կատարեցինք: Գյուղատնտեսության զարգացման եւ գյուղի հզորացման համար տարեկան ծախսվում էր հարյուրավոր միլիոն լարի:

12 տարի առաջ ընդգծեցի, որ եվրահնդեգությունը մեր ռազմավարական ընտրությունն է: Գիշտ է, հարեւաններին չեն ընտրում եւ այդ պատճառով եվրահնդեգ-

մանը զուգընթաց, Ռուսաստանի նկատմամբ պետք է գրավեցինք սկզբունքային, սակայն՝ կոռեկտ դիրքորոշում: Ես խոստացա, որ մեր իշխանությունը հնարավոր ամեն ինչ կանի հարեւանի հետ հարաբերությունների կարգավորման համար, եւ հատկապես, որ գիտեք, թե որքան շահավետ են մեր բնակիչների համար վերականգնված առևտրական հարաբերությունները: Եվ մանավանդ, որ այս ամենին զուգահեռ, հենց մեր իշխանությունը, մեր ժողովրդի հետ միասին, ձեռք բերեց Եվրոպայի հետ անայցեգրային պայմանակարգի իրավունք, ձեւակերպեց ազատ առևտրի պայմանագիր եւ ստացավ Եվրամիության անդամության թեկնածուի կարգավիճակ, հայտարարեց Բիժինա Իվանիշվիլին եւ հավելեց, որ դեռևս շատ են հիմնախնդիրները եւ ձեռք բերածի վրա կանգ առնել չի կարելի:

- Մեր խնդիրն է ոչ միայն հերթական հաղթանակ տանել, այլև ձեռք բերել սահմանադրական մեծամասնություն: Համոզված եմ, որ հենց սահմանադրական մեծամասնությունը կստեղծի ամենակայուն երկարաժամկետ գրավականը երկրի անընդունալի զարգացման գործում, - սասց Բիժինա Իվանիշվիլին:

Նրա խոսքով, սահմանադրական մեծամասնությունը անհրաժեշտ է երկրի քաղաքական համակարգի առողջացման, հայրենիքի ու ժողովրդի դեմ ծանրագույն հանցանք գործած քաղաքական ուժի՝ «Ազգային շարժման» դատապարտման եւ ոչ սահմանադրական ճանաչելու, «Ընտանեկան արժեքների եւ անչափահասների պաշտպանության մասին» օրենքի ընդունման եւ բարձրագույն, սահմանադրական

մակարդակով ընտանեկան արժեքների ու անչափահասների պաշտպանության, սահմանադրորեն Վրաց Ուղղափառ եկեղեցու դերի վավերացման համար:

«Վրացական երազանքի» պատվավոր նախագահն իր ելույթում անդրադարձավ նաև այն չորրորդ պայմանին, որի մասին բազմիցս խոսվել էր՝ նախորդող հանրահավաքներին:

- Մեր ազգային կարելորագույն խնդիրը միացյալ Վրաստանում ապրելն է: Մեր երկրի շուրջ իրադարձությունները սրընթաց զարգանում են, եւ այս պայմաններում ցանկացած պահի կարող են ստեղծվել երկրի տարածքային ամբողջականությունը խաղաղ ճանապարհով վերականգնելու հնարավորություններ, որոնք կյանքի կոչելու համար պարտադիր կդառնա սահմանադրական մեծամասնության առկայությունը: Վստահ կարելի է ասել, որ ազգայնականները արհեստական արգելքներ կստեղծեն նաև տարածքային ամբողջականության վերականգնման անհրաժեշտ սահմանադրական փոփոխությունների ընթացակարգում, հայտարարեց Բիժինա Իվանիշվիլին՝ հավելելով, որ երկրի տարածքային ամբողջականության վերականգնման հարցը բազմիցս բարձրաձայնել են՝ գլխավոր ասելիքը թողնելով Շիրակ և Բարթեղի տարածաշրջանում հնչեցնելու համար:

- Մեր նպատակը միայն տարածքների վերադարձը չէ, հողը որպես այդպիսին գին չունի առանց այդտեղ ապրող մարդկանց: Մեր գլխավոր նպատակն է ապահովել մեր օս քույրերի ու եղբայրների վերադարձը: Գլխավոր գաղափարը այն հարաբերությունների վերականգնումն է, - նշեց Բիժինա Իվանիշվիլին:

Նա հիշեցրեց 2012 թվականի հուլիսի 15-ին հնչեցրած իր ելույթի այն հատվածը, ուր խոսում էր ոչ միայն ներքին, այլև մեղքն ընդունելու ու ապաշխարելու կարողության մասին:

- Մենք մեկ անգամ եւս ներողություն ենք խնդրելու վրաց մայրերից, մեր ցավակցությունն ենք հայտնելու օս մայրերին եւ հնարավոր ջանքերը գործադրելու անհետ կորած զավակներին գտնելու մեջ: Անցկացնենք արդար հետաքննություն, ուղղենք այն, ինչ դեռ հնարավոր է ուղղել, - հիշեցրեց Բիժինա Իվանիշվիլին եւ հավելեց, որ վրացիներն ու օսերը կարող են վերականգնել հարաբերությունները, քանի որ նրանց շատ բան է միավորում:

- Այսօր մենք հստակ գիտակցում ենք, որ 2008 թվականի օգոստոսի պատերազմը չի եղել վրաց եւ օս ժողովուրդների ցանկությանը: Ուստի, երբ կբացահայտենք եղբայրասպան դիմակայության պատվիրատուներին, արդար պատասխան կպահանջենք, անվերապահորեն օրակարգում բարձրացնելով վրաց եւ օս ժողովուրդների հարաբերությունների վերականգնման հարցը: Խոստանում եմ, որ մոտ ժամանակներում կանցկացվի վրացական Նյուրեմբերգի դատավարությունը, որը կդառնա մեր հաշտեցման նախադրյալ, - հայտարարեց Բիժինա Իվանիշվիլին եւ հավելեց, որ հոկտեմբերի 26-ի ընտրություններից հետո անվերապահորեն պատասխանատվության կենթարկվեն պատերազմի հրահրող եւ վրաց-օսական եղբայրությունն ու համագոյակցությունը խարխուղ բոլոր մեղավորներն առանց բացառության: Իսկ մենք ինքներս մեր մեջ ուժ ու կորով կգտնենք ներողություն խնդրելու համար:

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱՋԱՆՔԻ» ԴԱՏՎՈՐԱԿՆԵՐԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՆ ՏԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԵՏ

ԱՆԱԼՔԱԼԱՔԻ - ՆԻՆՈՑՄԻՆԿ

Վրաստանի 10-րդ գումարման խորհրդարանի Ախալքալաքի եւ Նինոծմինդայի մեծամասնական պատգամավոր, հոկտեմբերի 26-ին ացկացվելիք խորհրդարանական ընտրությունների համար, վերոնշյալ մունիցի-



պալիտետներում «Վրացական երազանք» կուսակցության պատվիրակ Սամվել Մանուկյանը, իր նախընտրական քարոզարշավի շրջանակներում, շարունակում է հանդիպումներ անցկացնել Ախալքալաքի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների մի շարք գյուղերի բնակիչների հետ: Մասնավորապես, Սամվել Մանուկյանը, Ախալքալաքի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների քաղաքապետեր Մելքոն Մակարյանի եւ Անի Մոսոյանի, սակերբուլոյի նախագահներ Նաիրի Իրիցյանի ու Վահան Արոյանի ուղեկցությամբ, հանդիպումներ է ունեցել Ախալքալաքի մունիցիպալիտետի Բոզալ, Մյաննիկյան, Դաղեշ, Կարծախ, Խավթեթ, Ափնիա, Էրինջա, Ֆիլիպովկա, Նինոծմինդայի մունիցիպալիտետի Մամգարա, Դիլիֆ, Դուլալիս, Մեծ եւ Փոքր Գոնդուրա գյուղերի բնակիչների հետ:

Հանդիպումներին «Վրացական երազանքի» պատվիրակը խոսեց 2012 թվականին հաջորդող ժամանակահատվածում մունիցիպալիտետների բնակավայրերում իրականացված եւ ընթացքի մեջ գտնվող լայնածավալ բարեփոխումների, առաջիկա նախագծերի մասին: Սամվել Մանուկյանն առանձնակի ընդգծեց հոկտեմբերի 26-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրություններին «Վրացական երազանքի» կողմից սահմանադրական մեծամասնության ստացման կարելորությունը:

ԱՆԱԼՑԻՆԵ - ԲՈՐժՈՍԻ - ԱՄՊԻՆՉԱ - ԱԴԻԳԵՆԻ Առաջիկա խորհրդարանական ընտրությունների քա-

րոզարշավին ակտիվ ներգրավվել է նաև Վրաստանի 10-րդ գումարման խորհրդարանի Ախալքալաքի, Բորժոմի, Ասպինձայի եւ Ադիգեմի մեծամասնական պատգամավոր, հոկտեմբերի 26-ի ընտրությունների «Վրացական երազանքի» պատվիրակ Անտոն Օբուլաշվիլին:

Անտոն Օբուլաշվիլին վերջին երկու օրերին հանդիպումներ ունեցավ Ախալքալաքի մունիցիպալիտետի Զակի, Սազել, Դուլալիս, Արալ, Փոքր Պամաճ, Մեծ Պամաճ, Փոքր Ծիրա, Ծուղուրթ, Բորժոմի մունիցիպալիտետի Տաբաթուրի, Մոլիթի, Բալանթա գյուղերի եւ Բակուրիանի ավանի, Ասպինձայի մունիցիպալիտետի Դամալա եւ Իդունալի գյուղերի բնակիչների հետ:

Հանդիպումներին «Վրացական երազանքի» պատվիրակը խոսեց ոչ միայն արդեն իսկ իրականացված եւ իրականացման փուլում գտնվող ենթակառուցային նախագծերի,



այլեւ առաջիկայում ծրագրվող բարեփոխումների մասին:

ՍԱՌՆԵՈՒԼԻ - ԳՐԱՊԱՐԱՆԻ

Վրաստանի խորհրդարանի 10-րդ գումարման Մառնեուլի եւ Գարդաբանի մեծամասնական պատգամավոր, առաջիկա խորհրդարանական ընտրությունների վերոնշյալ մունիցիպալիտետներում «Վրացական երազանքի» պատվիրակ Զաուր Դարգալին, Մառնեուլի մունիցիպալիտետի սակերբուլոյի պատգամավոր Արսեն Հախվերդյանի հետ, հանդիպումներ ունեցավ Մառնեուլի մունիցիպալիտետի Շահումյան ավանի Խոժոնի, Չանախչի, Աղբյուրփի, Օփրեթի եւ այլ գյուղերի բնակիչների հետ: «Վրացական երազանքի» պատվիրակը մանրամասն խոսեց կոնկրետ բնակավայրերում իրականացված ենթակառուցային նախագծերի, սոցիալ-տնտեսական ոլորտում ակնհայտ առաջընթացի, առաջիկա ծրագրերի մասին, առանձնակի նշեց առաջիկա ընտրություններին «Վրացական երազանքի» սահմանադրական մեծամասնության ապահովման կարելորությունը:



ԲՈՒՆԻՍԻ - ԴԱՆԻՍԻ - ԹԵԹԻՇՎԱՐՈ - ԾԱԼԿԱ

Բոլնիսի մունիցիպալիտետի քաղաքապետ, հոկտեմբերի 26-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրությունների Բոլնիսի, Դանիսի, Թեթիժարոյի, եւ Ծալկայի մունիցիպալիտետներում «Վրացական երազանքի» պատվիրակ Դավիթ Շերազադիշվիլին, քարոզարշավի շրջանակներում, հանդիպումներ ունեցավ Թեթիժարոյի մունիցիպալիտետի Սամշվիլո, Կողա, Մուխաթի, Բոլնիսի մունիցիպալիտետի Բոլնիս-Խաչենի, Կիանթեթի, Ծալկայի մունիցիպալիտետի Նարդեան, Օզնի, Աշխալա եւ այլ գյուղերի բնակիչների հետ:

Խոսելով 2012 թվականից երկրում եւ, մասնավորապես կոնկրետ մունիցիպալիտետների բնակավայրերում իրականացված բարեփոխումների, ենթակառուցային նախագծերի մասին, Դավիթ Շերազադիշվիլին առանձնակի ընդգծեց, որ առաջիկա ընտրություններին «Վրաց-



ական երազանքի» համոզիչ հաղթանակը երկրի համար կդառնա խաղաղ առաջընթացի, բարգավաճման, լայնածավալ նախագծերի իրականացման նախադրյալ: **Պատրաստեց ՅՈՐԻ ԽՈՐԻՆՅԱՆԸ**